


գետոյ եօթհարորդ անգամ, բարձրացաւ վարա-
գորը պ. պ. Աւականցը, Տէր-Ղրիգորեանը, Շահ-
բուրազեանը, Թաթէոսեանը եւ երկու ՌՌները (ան-
սայտ ազգերը) փութը ինչ զուարճացլին ժողովուրդ-
դին, ցոյց տալով ըստ իւրեանց կարողութեան „կլո-
կու քաջցածմերի“ շատ ուտելը անօթի փորով ու
հնազըը կշտանալուց յետոյ, փախչել հիւրանոցից։

Վերոյիշեալ թատրոնական ազատուրութիւններէ
պատճառով, էս ժողովուրդ կազմող անդամներէյ
մէկն էլ ես լինելով, ազատ խղճով յանդգնում եմ
յայտնել հայ թատրոնական նորոհաս երիտասարդ-
ներին, որ թողնեն զբանջը զանազան Վարդերին,
Յառատներին եւ այլն սրանց նման պիեսներին, եւ
աշխատեն թէ՛ նպաստում են խեղճ Հայկական
թատրոնի զազաւարին, չը զզուեցնել առանց նրան
էլ Հայկական թատրոն չը յարգող Թիֆլիզի հայ
ժողովուրդին, ու թող բեմ զուրս գան խղճմասնե-
րէն պարտաւորութիւնները արտայատելու, մեր
անտարբեր հայեցուածքի տէր հայ ժողովուրդի ա-
ռաջ։

Վերջացնելով իմ նկատողութիւնս, ես մէկ բա-
նի լիպայ եմ ցաւում, որ չը հայելով մեր երի-
տասարդ տղաների հաճակութեանը դէպի Հայաս-
թատրոն, չընը գտնում կարեկցութիւն կանանցի ու-
ռի կողմից։



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱԳԹԱՂԻ ՀԱՐՍՆԻՔԸ

II

Յետոյ... անցաւ եօթն ամիս։
Թիֆլիսի ամառուան գիշերները մէկն էր։
Լուսինը բարեհաճել էր իր ձեռքով դուրս գալ կամաց կամաց Մաթթաղի սարի (չուան) պատանդանի տակից։ Նրա արծաթափայլ շողքը չորսակերպ զանազան եկեղեցիներին և գմբէթների զուլանները, լոյս էր տարածում բաղդաւոր Թիֆլիս քաղաքի չորս կողմը։
Այդ շողքը կենդրոնացած էր 10 ժամին, երկուցին, հանգուցեալ Տէր Օհանեսի հայաթի (բաղի) վրայ։
Այդ հայաթը բաղկանում էր չորս պարսպից, որոնցից մէկը տախտակից էր։
Տախտակած պարսպի ետեւի հայաթը պատկանում էր դուրդար Պետրոսին։
Դուրդար Պետրոսը ունէր շատ աղջիկներ, ինքը գիտէր իր արհեստը, խափում էր շատերին և չէր մերձենում աղքատներին, որովհետեւ խափուելով հարուստներին, ինքն էլ միշտ նրանց միայն խաբում էր։
Դա ունէր շատ աղջիկներ և մոռացանք ասել, որ կին ունէր։
Այդ կինը կարելի է ասել տղան էր, թէն զեղեցիկ չէր նմանապէս։
Բայց այդ կինը ունէր բարի սիրտ և մաքուր մանտիլ։
Մաքուր մանտիլ ունէր, որովհետեւ չէր կարող չունենալ։ Եթէ մաքուր մանտիլ չունենար—ամօթ էր։ Ամօթ էր, որովհետեւ ամենքը նրանց տան չըկապարհում, հազար թուանի տէր կարողութեան մարդիկներից սկսած մինչև բաղիկալ Գրիգորի Մաթթաղի կինը, բոլորը ունէին մաքուր մանտիլներ։
Այդ դուրդարը և իր կինը բացի շատ աղջիկներից ունէին և մէկ տղայ։
Տղան ստուգի էր, հաստ ու պինդ։
Նա սիրում էր առաստաղի գեղեցկութիւնը։
Ուրեմն սիրում էր Մաթթաղին։
Իսկ Մաթթաղը կին էր, ջահիլ, երեսասարդ կին։
Իր սիրելի ամուսինը խափել էր նրան, փախել էր նրա քնքոյշ և եռանդոտ գրկից։
Սէրը իրն էր պահանջում։
Ուրեմն նա պիտի սիրէր...
Այդ գիշերը փաղրեցանքնից տան չորս կողմը սաստիկ լուրժիւն էր տրեւի։
Մարդ, կին, աղջիկ, ամուսին, կնքահայր, կընքամայր, որը, աղքատ, դուրդար, կալատող, մշակ, ամէնքը զբաղուած էին։
Որը, «սիրում էր» դրանցից, որը գործ էր կատարում, որը հաշիւում էր, պարկած անկողնու մէջ, թէ ինչպէս պիտի գործ կատարէ միւս առաւօտը, որը... մէկ խօսքով, ամէնքը այդ գիշեր գործ ունէին, բացի Մաթթաղը և հաստ ու պինդ կազմուածքի տէր դուրդարի տղայից։
Տղան կանգնած էր տախտակների ետեւից և մէկ ինչ որ եղանակ էր շուռնում։
Մաթթաղի ուշք ու միտքը մէկ բանով էր զբաւուած միայն—սիրով։
Նա սիրել էր ուղում, նա սիրում էր, բայց նրա սիրոյ առարկան ապստամբել էր նրա անկեղծ սիրոյ զգացմունքների դէմ։
Այդ սիրոյ առարկան փախել էր, իսկ Մաթթաղի չորս կողմը (ինչպէս նրան երևում էր) նա կարծում էր, ամէնքը նրան չըպատասխանէր դրանցից սիրում էին, որովհետեւ այդ լուսնադարձ ամառնային գիշերուայ լուրժիւնի մէջ, ամէնքը պիտի սիրէին։
Իսկ Մաթթաղը շատ գիշերներ էր անցկացրել կանգնած լուսնու ու մուգ լիւսնի ընդարձակ հայաթում, նայելով լուսնին, մտքերով յափշտակուած հեռու, ուրիշ անընթացիկ երևակայութեան մէջ ստեղծուած մէկ աշխարհ և այդպիսի գիշերները նա միշտ նկատել էր, որ տախտակայ պարսպի ետեւից, դուրդար Պետրոսի տղայ, հաստ ու պինդ տղան, նայում է ու նկատում է դրա ամէն մի քայլը։
Շատ անգամ լսել էր Մաթթաղը ինչպէս նա խոր հաւաքել է այն տախտակների ետեւից արտասանելով Մաթթաղի անունը։
Այդ գիշերը, այդ ամառուայ գիշերը, որից սկսում ենք մեր այս երկրորդ գլխի պատմութիւնը, Մաթթաղը իր տխուր դրութեան մէջ, կանգնած էր իրանց հայաթում և ման էր գալիս իր երևակայութեան թևերով հեռու, շատ հեռու...
Տախտակի ետեւից մէկ խոր հաւաքանք լսուց։
Մաթթաղը լսեց, ուշքի եկաւ և ուղեցաւ հեռանալ։

Տախտակի ետեւից նկատում էր Մաթթաղի ամէն շարժումները հաստ ու պինդ տղան։
Նրա սառնասառն ուր Մաթթաղը ուղում է ուրիշ գեղերներու պէս հեռանալ, թողնի նրան և նրա հառաչանքները առանց ուշադրութեան,—չը համբերեց։
— Մաթթաղ ջան—հառաչեց նա շատ մեղմ։
Մաթթաղը կանգնեց, բայց չը նայեց դէպի էն կողմը։
— Մաթթաղ ջան, կրկնեց նա «ես քեզ սիրում եմ»։
Սէր բառը լսելու պէս, Մաթթաղի բոլոր կազմուածքի մէջ, մէկ էլ քարական հոսանք անցաւ։
Նրա կուրծքը դողաց, ոտները ծալուեցին, աչքերը մթնեցան։
— Սիրում եմ քեզ իմ կեանքից առաւել... մէկ պաշ, մէկ պաշ եմ խնդրում։
Մաթթաղը մնացած էր անշարժ դրութեան մէջ։
Տղան այդ նկատեց, ու վազի արագութեամբ բարձրացաւ, թռաւ տախտակի պարսպից փաղըրեղանցից հայաթը ու կպաւ իր ամուր պըռօշներով Մաթթաղի քնքոյշ պըռօշներին,—սեղմեց նրա կուրծքը իր կուրծքին, փսփոսելով ականջուս։
— Սիրում եմ... սիրում եմ...
Բաժակը լցուեց, սիրոյ շանթերը կրակեցին խեղճ կինարմատի բոլոր զգայարանները, նա մոռացաւ իրան, իր դարձիկը եղբայր Օսկանին ու թուրացած ձեռներով փաթթուեց երեսասարդի վզովը։
Այդ ժամանակ մէկ ևս ամպ ծածկեց լուսինը ու երկար, երկար ժամանակ, մութը և լուրժիւնը տիրում էր փաղրեցանքնից հայաթում։
(Կը շարունակուի)։

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Նորերումս Բրիտանի թշուառական ձեռնարանի պրօֆէսոր պ. Ժօլի ապացուցեց իր հետազոտութիւններով, հիմնելով ճիշդ թուանշանների վերա, որ քանի ընդարձակվում է մի երկրի մէջ արալի դրածութիւնը, այնքան աւելանում է խելագարվածների թիւը և ուրիշ կողմից անձնասպանութեան քանակութիւնը։ Արեւելոստիկից առաջացած անձնասպանութեան տարեկան թիւը հասնում էր Ֆրանսիայում 1848 թվին մինչև 141, իսկ 1866 թվին արդէն հասել էր մինչև 401։
* * *
Խմբագրութիւնը, «Մշակ» լրագրի, շնորհակալութեամբ ստացաւ «Նին-Նախիջևանի մօտ Նինջակ վանքի Արիստակէս վարդապետ Սեդրակեանից մի թարգմանութիւն Ֆրանսիական մի հռչակված գրքի «La vie éternelle» (Յաւիտենական կեանք) պ. Էրնէստ Նավիլի։ Այդ գրքի մասին խմբագրութիւնը կաշխատէ իր գալու համարներից մէկում իր ընթերցողին մի կարճ մատենագրութիւն առաջարկել։
* * *
Պ. Յարութիւն Արեւելոստիկ, որի մասին մենք նորերումս խօսեցանք, Յիւրիկի համալսարանում քննութիւն բռնելուց և յօդված առաջարկելուց յետոյ, ստացաւ դոկտորական գիտնական աստիճանը։
Պ. Արեւելոստիկ քննութիւն է։ Նորա յօդվածի վերնագիրն է «Über den Bichloräther»։
Երեսասարդ դոկտոր Ներսիսեան դպրոցի աշակերտներիցն է և հանգուցեալ Էֆէնդեանի որդեգիրն է։
* * *
Պարսկաստանի մի մարաքաղաքի մէջ կամեցան հիմնել մի եւրոպական ուսումնարան, որտեղ առարկաները կուսուցանվէին Ֆրանսիական լեզվով։ Այդ բանը լսելով, մոլլաները հաւաքվեցան և համոզեցին ժողովրդին չը տալ իր երեխաները այդ տեսակ ուսումնարանը, որովհետեւ, ասում էին նոքա, երբ այդ ուսումնարանի մէջ աւարտածները մեռնելով յաւիտենական դատաստանին կը ներկայանան և յանդակները, ինչպէս վկայում է Ղուրանը, կը դիմեն նոքա զանազան սովորական հարցեր առաջարկելով—նոքա պարսկերէն չը գիտենալով, չեն կարողանայ հարցերին պատասխանել, և ուրեմն կերթան դժոխքը։ Այսպիսով ուսումնարանը չը յաջողեցաւ, որովհետեւ ոչ մի աշակերտ չը գտնվեցաւ...
* * *
Պ. Ժիւլ Դեպլը այս օրերս պիտի հրատարակէ մի գիրք «աղգային պաշտպանութեան կառավարութեան պատմութիւն» անունով։ Ասում են, որ նա գրում է այժմ մի գիրք «Կոմունայի պատմութիւն» անունով, որը կը պարունակէ իր մէջ շատ հետաքրքիր, փարկի վերջին շարժման վերաբերեալ բոլորովին նոր նիւթեր։
* * *

Էջմիածնի «Արարատ» ամսագիրը յետագայ քաղված է անուով Կ. Պօլսի «Օրագիր» թերթից։
«Մշի քաղաքը, որ աւերակ էր մինչ ցարդ, և որոյ շէնքուէին քանիցս խնդրուած էր հայրենասէր ազգայնոց կողմէն, ցաւի սիրտ կկանանք, թէ այս անգամ թաթուն—օղու անուն Մահմադականին թափու եղած է։ Միթէ Հայերուն համար էր արգելք և Մահմադականաց համար չէր. ուր կը մնայ ուրեմն հաւասարութեան սկզբունքը, որ տէրութեան հանդիսաւոր կերպով քարոզած զսկրունքն է»։
* * *
Ինչպէս յայտնի է, Զվիցէրիայի Յիւրիկ քաղաքում համալսարանի ուսանողների թիւում կան և կանայք։ Ասում են որ նոցա քանակութիւնը կազմում է այժմ Յիւրիկում ուսանողների թիւի տասներորդ մասը։ Նորերումս համալսարանի պրօֆէսորները և ուսանողները համաձայնեցին պահանջելու, որ կանայք չընդունվին առանց պատրաստական հարցաքննութեան։
* * *
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ (Թիֆլիս. պ. Սպասողանին)։
«Մշակ» լրագրի խմբագրութիւնը միշտ հեռու է պահելու իրան անձնականութիւններից։ Մեր հէ-

լիետոնիստ Չաքուճը նկարագրել է մի անցք մի ծառայ Բարի-պոստոլ անունով մարդի կեանքից, զարմանում ենք, որ մեզ մի անյայտ անձ պատահեան անունով, իր վերայ է ընդունել Բարի-պոստոլի վարմունքը,—ինչ հիման վերայ, մենք չը գիտենք,—և աշխատել է դէպի մեզ ուղարկված յօդուածի մէջ զիպել մեր աշխատակից Չաքուճ մասնաւոր կեանքին, և անվանել է իշխալ պարունիչ և ար-պոստոլ։
Խմբագրութիւնը իրաւունք չունենալով վերաբերել Բարի-պոստոլի վարմունքը իրան անյայտ պ. Սպասողանին, չէ կարող տպել նորա պատասխանը։
Թիֆլիսի ՎԱՃԱՌԱՆՈՅ (փետրվարի 3-ին)։
ՈՍԿԻՆ (պօլիտիկական) 6 « 7 կող
ԲԱՄԱՐԱԿ Երևանում 6 « 35 «
" Ամերիկայի սերմից 7 « 80 «
ԲՈՒԹԹԸ ճերմակ լաւ 9 « 60 «
" հասարակ թարգմանի 6 « — «
ԹԱՄԱԿՐՈՒ Տրագիկոն 11 « 50 «
" Սամսոնի խիստ լաւ 20 « — «
" հասարակ 15 « — «
ՇԱԲԱՐԸ Ռոմ 9 « 70 «
" զգալի 9 « 50 «
ՇԱԲԱՐԱԿԱՆ Ռոմ 8 « — «
ՂԱՆՎԱ Լիւանի լաւ 13 « — «
" Մարտիկից, ցածր 10 « 50 «
" Մօկո, շատ լաւ 14 « 50 «
ՊԼԱՆԸ 12 « — «

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

Տիւիստում ԱՆԱԳՐԱԹԵԱՆԻ գրատանը վաճառվում է:	Առանց ճան, ծախք		Հասնապ. ծախքով:	
	ման,	կող,	ման,	կող,
Արտիկան Գ. Համառօտութիւն Հայոց ազգի պատմութեան	1	—	1	10
Արտիկան Խ. Նախաշախի կրթութեան ի պատշաճութեան	—	30	—	40
Աշտոնի ընտանիքը, Նազեթա վ. վէպը	—	25	—	35
Արամեան Հանիկ. Դասարան հայկազն մանկանց	—	20	—	25
Իժ. " Համառօտ բառարանը Հայ. Տաճ. Տրանս.	—	50	—	65
Այդ ու բէն ընծայ երեխայոց	—	10	—	12
Աշէրստանը Դիւմա, Մատուան զօթական	4	—	1	15
Բարխուդարեանց, Սէր կամ Մահ, ողբերգութիւն հինգ գործողութեամբ	—	—	40	50
Բուդաղեանց, Վէրֆիլդեր Ներեց, Անդրիկան հեղինակի Օլիւիեր Գուրմիի գործը	—	—	70	86
Բարդուկան պատմութիւն երեխայոց համար	—	—	15	20
Բազմակէտ, (10 տարուան) համար	—	3	50	3
Գամառ Գաթիկայի բանաստեղծութիւնքը	—	—	50	60
Երեւելայ վարդապետի կողքացոյ եղծ աղանդոյ ոսկէ կազմ	2	50	2	80
Եղիշէի վարդապետի վառն վարդանայ և Հայոց պատերազմի	1	—	1	20
Եղիշէի վարդապետի պատմութիւնը վարդանի և Հայոց պատերազմի համար	—	—	65	80
Էմին Մկր. Մովսեսի Կաղանկատուացոյ, պատմութիւն աղուանից աշխարհի	1	50	1	75
Իժ. " Ստեփանոսի Միւսեանց եպիսկոպոսի պատմութիւն տանի սխական	—	—	2	20
Ընծայ կաղանդի օրվայ	—	—	10	15
Ժամագիրը կաղանդ	1	40	1	55
Խոյր տառերի և կենսագրութեան գլխաւոր գործածական նշանների թերթեր	—	20	—	25
Խատիսեան. Սէր հայ երեխանց ընծայ	—	60	—	75
Խոյր միութիւն Հայոց	—	80	—	90
Կուռեղիտ. Սկզբնական դասագիրք աշխարհագրութեան Ամերիկայի մետոդով	—	—	30	35
Հայերէն կարգալ և գրել ուսուցանելու հրահանգ	—	15	—	20
Հատուիկ և պատկերազարդ առակք Եղիպոսի և առաձը պէս պէս ազգաց	—	—	25	30
Հրաւիրակ երկրին Աւետաց	2	—	2	25
Հազար ու մէկ գիշեր արապացի վէպը հատոր առաջին	1	25	1	40
Ղազար փարպեցու գրած թուղթը թարգմանութիւն և բացատրութիւնը Մ. Նալբանդեանց	—	—	60	75
Մաթթեանց. Փնջիկ երկարութիւնք ազգային երգչի	—	—	65	80
Մեհապտանի աղօթքի կամ տարազը վարդուհի թատերգութիւն 5 արարուածով	—	—	70	85
Նախակրթիչ Հայերէն լեզուի յօթնեակ քառասուն	—	—	60	75
Նաղարեանց. Հանդէս նոր հայախօսութեան 2 հատոր	2	80	3	20
Նոր Գնար Հայաստանի տետր 4—5	—	—	55	65
Նորիկացոյ Գրիգորի ողբերգութիւն ոսկէ կազմ	1	50	1	80
Շահագիզեանց. Ազգութեան ժամեր	—	—	60	70
Շահնազարեանց. Մրադիր պատմութիւն Հայոց աշխարհի	—	—	80	90
Որը Մատիլդա բարոյական վէպ երեխանց համար	—	—	25	30
Չամկեանց. Գերականութիւն Հայկազն լեզուի	1	50	1	65
Պապասեան. Ընդհանուր տեսութիւն Արեւելեանոր գրաւոր լեզուի	—	—	80	90
Հայոց	—	—	60	75
Իժ Պատմութիւն Հայոց պատմութեան	—	—	50	60
Պէտադուէ. Դատերը առաքելիք	—	—	70	80
Սմիտ պատմագիր	—	—	—	—
Սիմօնեանց Պ. Դասագիր ընդհանուր պատմութեան 2 հատոր	1	50	1	70
Վիլհելմ-թէլ կամ Հայուստայի ազատութիւնը	—	—	50	65
Տէր-Գրիգորեանց. Երթութիւն թուրքական	—	—	30	40
Փափաղեանց. Հրահանգ քերականութեան Հայերէն լեզուի	—	—	80	90
Փուլինեանց. Դալալ Ղազո	—	—	20	20

Հինը մանկի և առավել զգեցի պահանջողները ճանապարհի ծախս չեն վճարում։